XVIII ԴԱՐԻ 60-70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻՆ

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Ն. Բ.

Նադիր շահի (Նադիրկուլի խանի) ջանքերը ժամանակավորապես միայն կանխեցին պարսկական պետության քայքայումը: 1747 թ. իր մերձավորների ձեռքով սպանվելուց հետո երկրում սկսվեց անիշխանություն, որը տևեց շուրջ 50 տարի: Կենտրոնական իշխանության թուլացման հետևանքով աշխուժանում են անջատողական ձգտումները, խորանում ներքին պառակտումները, և հակամարտ խմբավորումները կատաղի պայքար են ծավալում իշխանության համար: Նադիր շահի սպանությունից հետո տիրող կացությունը դիպուկ է բնորոշել XVIII դարի կեսի անանուն հայ ժամանակագիրը. «...վեր ի վայր տապալեցաւ իշխանութիւնն պարսից, և բոլոր Պարսկաստան. մի զմիով ելանէին, իւրաքանչիւր խանք և երևելիք իւրաքանչիւր տեղաց շարժեցան, և իւրաքանչիւր մասնաւոր գաւառ գրեթէ մի մի թագաւորութիւն ցուցին զինքեանս. և յարեան ի վերայ միմեանց պատերազմաւ»[1]:

Կենտրոնական իշխանության բացակայության և շահական գահի համար մղվող պայքարի հետևանքով շատ հավակնորդներ, հատկապես ծայրամասային սահմանապահ խանություններում, իրենց անկախ էին հռչակել: Նրանցից էին Արևելյան Հայաստանում և Ատրպատականում կազմավորված Երևանի, Նախիջևանի, Խոյի, Մակվի, Ղարաբաղի, Ուրմիայի, Գանձակի, Ղուբայի և մի շարք այլ խանություններ, որոնք ժամանակ առ ժամանակ արյունահեղ պատերազմի մեջ էին մտնում միմյանց դեմ՝ իրենց տարածքային ամբողջականության պահպանման կամ ազդեցության ոլորտների ընդլայնման համար: Հաճախակի դարձած ներքին կռիվների, քաղաքական հերհերուկ դրության պատճառով քայքայվում է նաև Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքը: Երևանի խանը, մտահոգ իր իշխանության պահպանմամբ ու ամրապնդմամբ, ձգտում էր ոչնչացնել հայության դիմադրողական ուժը և առաջին հերթին հայ իշխանական տների (ժամանակին Նադիր շահի պաշտպանությունը վայելած) շառավիղներին: Նրանցից էր Մելիքջան Մելիք-Շահնազարյանի որդի Մանուչարը, որը Նադիրի կողմից բարձրագույն պարգևների հասած մելիքներից էր: Շահի մահից անմիջապես հետո, դավադրաբար սպանելով Մելիք Մանուչարին, Երևանի

---

[1] *Դիւան հայոց պատմութեան, գ. ժ, Թիֆլիս, 1912, էջ 157–158:*

խանը, միևնույն է, չի կարողանում ամրապնդել իր տիրապետությունը, քանզի Պարսկաստանի հյուսիսային կողմերում անկախացած իշխանությունները ձգտում էին տեր դառնալ նաև Երևանի խանությանը: Այսպես, Նադիր շահի զորավարներից Մուհամմեդ խան Կաջարը 1749 թ. զորքով շարժվում է Երևանի վրա և պաշարում բերդը: Դժվարին կացության մեջ հայտնված Երևանի խանը խնդրանքով դիմում է Քարթլիի և Կախեթի վալիների (կառավարիչների) օգնությանը՝ փոխարենը խոստանալով դառնալ վերջիններիս հարկատու (հիշենք, որ տակավին Նադիր շահի կամքով Արևելյան Վրաստա-նում կառավարիչներ (վալիներ) էին կարգվել Բագրատունյաց հարստության վրաց վերջին շառավիղներից Թեյմուրազը և նրա որդի Հերակլը, առաջինը՝ Քարթլիում, երկրորդը՝ Կախեթում): Այդ երկրների վալիները, որոնց նաև թագավորներ էին հորջորջում, անդրկովկասյան մյուս խաների համեմատությամբ, իրոք, շատ ավելի արտոնյալ վիճակում էին: Երևանի խանը վրաց վալիներից ստացած ռազմական աջակցության համար, ըստ էության, նրանցից վասալական կախվածության մեջ էր: Մի քանի տարի անց Քարթլիի և Կախեթի զորքերը նորից են շարժվում դեպի Արարատյան դաշտ՝ այս անգամ Երևանի խանությունը աֆղան Ազադ խանից պաշտպանելու համար: Վերջինս, օգտվելով Պարսկաստանում կենտրոնական իշխանության թուլացումից, ամրապնդել էր իր իշխանությունը Ատրպատականում, գրավել էր Թավրիզը, Նախիջևանը, իսկ 1752 թ. հարձակվել Երևանի խանության վրա: Այս արշավանքն աղետաբեր եղավ Արարատյան դաշտի, Նախիջևանի և Գողթան գավառի բնակչության համար: Կողոպտելով բնակավայրերը՝ արշավող զորքերը, ճանապարհին ամեն ինչ հրի ու սրի մատնելով, ի վերջո պաշարում են Երևանի բերդը: Դա մարտահրավեր էր Անդրկովկասում իր ազդեցությունը մեծացնելուն հետամուտ Քարթլի-Կախեթի շահերին: Եվ շատ արագ, իր զորքի գլուխն անցած, Քանաքեռ է հասնում Հերակլը: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում հուլիսի 28-ին: Վրացական զորքը, որին միացել էր նաև Երևանի կայազորը, պարտության է մատնում Ազադ խանին: Նահանջող Ազադ խանի զորախումբը ճանապարհին թալանում է Նախիջևանն ու Ագուլիսը, բոլոր գյուղերն ու ավանները: Ժամանակակիցները կարևորում են այն իրողությունը, որ այս անգամ վրացական զորքին հաջողվեց նվաճողներին դուրս քշել ոչ միայն Երևանի խանությունից, այլև ստիպել հեռանալ Պարսկաս-տան:

Երևանի խանը, այս ամենով հանդերձ, միշտ չէ, որ բարեխղճորեն կատարում էր Վրաստանին «հարկատուի» իր պարտա-կանությունը: Պատահական չէ, որ 1762 թ. Քարթլիի և Կախեթի միավորումից հետո Հերակլ II-ը ևս երկու արշավանքներով ստիպեց Երևանի խանին կատարել Վրաստանի նկատմամբ ստանձնած պարտավորությունները: Ճիշտ է, Քարթլին և Կախեթը միավորելուց հետո հաջողվեց է՛լ ավելի ամրացնել երկիրը, կազմակերպել առավել մարտունակ բանակ և ոչ միայն հաջողությամբ պաշտպանել պետության սահմանները, այլև ընկճել շրջակա պարսկական խանություններին, սակայն, միևնույն է, Հերակլը չկարողացավ դուրս գալ պարսից գերագույն հպատակությունից, պարսից արքունիքի համար

տակավին «Գյուրջիստանի վալի» էր: Վրաց ժողովրդի համար տվյալ պահին կարևորն այն էր, որ երկիրը ավերակներից բարձրացել և ապրում էր անվտանգ, ու նրա հետ հաշվի էին նստում հարևանները:

Պակաս կարևոր չէր մի իրողություն ևս, որ բարձրացնում էր Հերակլ II-ի պատիվն ու հեղինակությունը ամբողջ երկրամասի բնակչության մեջ: Գաղտնիք չէ, որ Վրաստանի և Անդրկովկասի համար մշտական պատուհաս էին Դաղստանի լեռնականները, որոնք պարբերաբար իջնում էին լեռներից և սարսափելի մրրիկի նման անցնում երկրի բնակավայրերով՝ դրանք վերածելով ավերակների, անապատի:

Հերակլ II-ը կարողացավ, թեկուզ և կարճ ժամանակով, Վրաստանը դարձնել մի պատվար այդ լեռնական վանդալների դեմ: Եվ հարավային Անդրկովկասը քիչ էր ենթարկվում գիշատիչների ավերածություններին: Հերակլը Անդրկովկասի բնակչությանը լեռնական բարբարոսներից փրկող միակ տոկուն ուժն էր: Նա հատկապես սիրով և բարեկամաբար էր վերաբերվում հայ ժողովրդին: Դրա մի մեծ ապացույց էր այն խոր հարգանքը, որ նա ուներ Էջմիածնի Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի նկատմամբ, որը կաթողիկոսական գահ էր բարձրացել 1763 թվականին: Մինչ այդ նա հայտնի էր որպես օրինակելի ուսուցիչ, քարոզիչ և առհասարակ մտավոր կարողություններով հարուստ և մեծ եռանդով օժտված խոհեմ հոգևորական: Նրա կաթողիկոսությունը տևեց 17 տարի (1763–1780 թթ.), և այդ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ծավալեց այնքան բազմակողմանի, եռուն գործունեություն, որ ամենայն իրավունքով կարող է համարվել ամենանշանավոր անհատականությունը XVIII դարի հայ լուսավորչական հոգևորականության մեջ: Ուսանել, այնուհետև դասավանդել է Էջմիածնի Մայր Աթոռի դպրոցում: Եղել է Էջմիածնի նվիրակ Կ. Պոլսում և Մադրասում: Սիմեոն Երևանցու կաթողիկոսության տարիներին Անդրկովկասի քաղաքական կյանքում զգալի դեր ուներ 1762 թվականից Քարթլի-Կախեթի թագավոր Հերակլ II-ը, որը ձգտում էր անջատ-անջատ վրացական հողերը միավորել պարսկաթուրքական տիրապետությունից ազատ մեկ միասնական պետության մեջ, ընդլայնել Վրաստանի գերակայությունն ամբողջ Անդրկովկասում: Հերակլ II-ի ծրագիրը նախատեսում էր, ընդառաջ գնալով հայ ազատագրական շարժման գործիչների կանխագծումներին, ստեղծել վրաց-հայկական քրիստոնեական պետություն՝ միավորելով երկու ժողովուրդներին: Հերակլ II-ը ջանում էր իր կողմը գրավել հայ երևելի գործիչներին և էլ ավելի սերտացնել հայ-վրացական եկեղեցական կապերը: Եվ գլխավորապես հենվելով վրաց թագավորի բարեհաճ վերաբերմունքի վրա, ստանալով նրա աջակցությունը՝ Սիմեոն Երևանցին սկսեց գործել ավելի ինքնավստահ ու համարձակ: Արդեն այն իրողությունը, որ Երևանի խանը հարկատու էր Հերակլին, ինքնին բավական էր, որ խանի հարաբերությունները Էջմիածնի հետ անհամեմատ մեղմ բնույթ կրեին: Թիֆլիսի արքունիքի և Էջմիածնի կաթողիկոսարանի փոխադարձ վերաբերմունքը միանգամայն մտերմական էր, և դա զգում էին անգամ ամբողջ մահմեդական բնակչությունը, հարևան խանությունները: Հաճախ էր պատահում, որ Երևանի խանը, ինչպես

նաև պարսից տարբեր կարգավիճակի իշխողներ, դիմում էր Սիմեոն կաթողիկոսին, խնդրում նրան միջնորդ լինել իր և Հերակլի միջև զանազան կարևոր խնդիրների առթիվ: Կաթողիկոսը բարեհաճությամբ կատարում էր այդպիսի միջնորդությունները՝ մեծ մասամբ հաջողությամբ իրացնելով մահմեդականների խնդրանքները: Ժամանակակից հիշատակարանները վկայում են, որ սա ևս ճանապարհ էր, որպեսզի Սիմեոն Երևանցի կաթողիկոսը վաստակի հեղինակություն և ստանա գործելու ազատություն: Եվ նրա գործելու ազատության առաջին քայլը եղավ այն, որ անհրաժեշտ շտկումներ ու բարեփոխություններ մտցրեց եկեղեցու ներքին կյանքի ու ծիսակատարությունների մեջ: Տոմարի բարեփոխմամբ Սիմեոն Երևանցին ազատեց հայությանը «ծռազատիկներից, որոնք երկար դարերի ընթացքում դժգոհություններ, խռովություններ, մինչև իսկ կռիվներ էին մտցնում հայերի ու մերձավոր քրիստոնյաների, մասնավորապես հույների հարաբերությունների մեջ: Սիմեոնի բարեկարգած օրա-ցույցը վերացնում էր շփոթությունները և հայերին միջոց էր տալիս տոնելու զատիկը մյուս քրիստոնյաների հետ միասին»[2]:

Ուշագրավ էին Սիմեոն Երևանցու շինարարական աշխատանք-ները: Նա Էջմիածնում բազմաթիվ անհրաժեշտ շինություններ կա-ռուցեց, բարեկարգեց միաբանության կեցությունը, վանքի տնտե-սությունը: Ընդհանրական աթոռը բարեկարգելով՝ նա միաժամանակ մեծ արիությամբ ու համառությամբ պաշտպանում էր նաև աթոռի ընդհանրական շահերն ամենուրեք, որտեղ նրանք վտանգված էին լինում:

Սիմեոն Երևանցին տնական մաքառումների միջոցով կարողա-ցավ Էջմիածնին հպատակեցնել Գանձասարի կաթողիկոսին, հմուտ օգտագործելով՝ այն նպաստավոր հանգամանքը, որ այդ պահին Գանձասարի թեմում երկու՝ միմյանց հակառակ կաթողիկոսներ կային, և ժողովուրդը, հակակրանքով լցված նրանց մրցակցությունից և հարուցած խռովություններից, դիմում էր Էջմիածին և պահանջում, որ վերացվի երկպառակությունը: Որպես Հայ առաքելական եկեղեցու նախանձախնդիր՝ Սիմեոն Երևանցին իր եռանդը հասցնում էր աներևակայելի չափերի:

Այսպես, նա Հերակլ II-ի աջակցությամբ հալածանք սկսեց Վրաստանի սահմաններում գործող կաթոլիկ քահանաների դեմ: Կաթոլիկությանը հարած հային տեղական իշխանությունների աջակցությամբ բերման էին ենթարկում Էջմիածին և մինչև որ մեղայական չէր ստանում, չէր արձակվում: Էջմիածնի կաթողիկոսարանն իր նվիրակների միջոցով, որոնք շրջում էին ամենուրեք, որտեղ հայ բնակչություն կար, զգալի գումարներ էին հավաքում: Այդ գործը Սիմեոն Երևանցին ավելի կազմակերպված դրության մեջ դրեց, ջանաց, որ ամենուրեք կարգ ու կանոն հաստատվի: Նա նվիրակությունները բաժանեց որոշ թեմերի և հաստատեց հաշվետվության կարգ: Հատկապես մեծ էին կաթողիկոսի ջանքերը Էջմիածնի կալվածքները հափշտակողներից ազատելու, նոր կալվածքներ ձեռք բերելու և առհասարակ

---

[2] **Լեո**, *Երկերի ժողովածու, հ. III, գ. II, Ե., 1973, էջ 279:*

կալվածատիրությունն օրինական փաստա-թղթերով Էջմիածնի վրա հաստատելու համար: Այդ նպատակով Սիմեոն Երևանցին ձեռնարկեց մի շատ կարևոր և հետաքրքրական գործ, այն է՝ կազմեց կալվածների մանրամասն ցուցակը, հին փաստաթղթերից հանած տեղեկություններով ցույց տվեց, թե երբ է այս կամ այն կալվածը դարձել Էջմիածնի սեփականություն, ինչ կալվածա-թղթերով կամ շահական հրովարտակներով, ինչ վեճեր են եղել այդ կալվածների առթիվ և այլ այսպիսի գործնական և կարևոր տեղեկություններ: Այդ բոլորը կաթողիկոսը հավաքեց «Ջամբռ» անունով իր աշխատության մեջ, որը կարելի է անվանել Էջմիածնի իրավական դրության հանրագիտարան: Քսանհինգ գլխից բաղկացած այդ աշխատությունը, որտեղ համառոտակի շարադրված է Հայոց եկեղեցու պատմությունը, նախորդ կաթողիկոսների գահակալման տարիները, հակաթոռ կաթողիկոսությունների և պատրիարքու-թյունների անջատողական գործունեության հասցրած վնասը և այլն, նաև հայության տնտեսական կյանքի և հողային հարաբերությունների պատմության ուսումնասիրության արժեքավոր սկզբնաղբյուր է: Որպես գրասեր և կրթասեր անհատականություն՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսին միայն վարչական և տնտեսական գործերը չէին զբաղեցնում: Նա շատ էր աշխատում, որպեսզի Էջմիածինը դարձնի նաև մտավոր կենտրոն: Այդ նպատակով նա դիմումներ հղեց իր հնդկաստանցի ծանոթներին, որոնց հետ մտերիմ հարաբերություններ էր ունեցել, երբ Էջմիածնի նվիրակ էր Մադրասում: Նրանցից ստացած միջոցներով Սիմեոն Երևանցին Էջմիածնում 1771 թ. հիմնեց տպարան՝ առաջին հայկական տպարանը Հայաստանի տարածքում: 1776 թ. հիմնեց նաև թղթի գործարան՝ վարպետներ հրավիրելով Եվրոպայից: Սիմեոն Երևանցու գործունեության արժանահիշատակ նշանավոր դրվագներից մեկն էլ այն էր, որ նա շարունակեց և զարգացրեց իր նշանավոր նախորդներից մեկի՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի սկսած հարաբերությունները ռուսական արքունիքի հետ ավելի մեծ եռանդով: Նրան առաջին հերթին մտահոգեց այն իրողությունը, որ Ռուսաստանի հայ գաղթօջախները հոգևոր գործերի նկատմամբ շատ անմխիթար դրության մեջ էին: Նրանց եկեղեցիները վարչական կողմից ենթարկված էին ռուս հոգևոր իշխանությանը և շատ զրկանքներ, երբեմն նաև խիստ հալածանքներ էին կրում մոլեռանդ ռուս հոգևորականներից: Ռուսաստանի ցրված ու տարան-ջատ հայ համայնքներից մեկ թեմ կազմելու և Էջմիածնի իշխանության տակ դնելու համար Սիմեոն Երևանցին 1766 թ. Պետերբուրգ ուղարկեց Դավիթ վարդապետին՝ Եկատերինա II-ին ներկայացնելու իր գրած կոնդակը, որում կաթողիկոսը խնդրում էր, որ կայսրուհին հրովարտակով հաստատի Էջմիածնի իրավասությունը Ռուսաստանում ապրող բոլոր հայերի վրա: «Բայց, ինչպես երևում է, - ճիշտ կերպով մեկնաբանել է Լ.Հեռն, - Դավիթ վարդապետն ուրիշ հանձնարարություններ ու խնդիրքներ էլ էր տարել, որոնք վերաբերում էին հայերի դրության: Այսպես հասկանալ է տալիս Եկատերինայի պատաս-խանը, որ ճիշտ այնպես էր, ինչպես խնդրել էր կաթողիկոսը: Այս հրովարտակը, որ գրվեց 1768-ի հուլիսի 30-ին, վկայում էր, որ կայսրուհին իր հովանավորության տակ է ընդունում կաթողիկոսին, հայ յուզբաշիներին և

հայոց ամբողջ ազգը, որոնց ամենքին հուսադրում է իր ողորմությամբ: Թե որքան բարձր է համարում Սիմեոնն այս հուսադրությունը, և թե առհասարակ որքան անկեղծ էր նա իր զգացմունքների մեջ դեպի Ռուսաստանը, կարելի է եզրակացնել այն հանգամանքից, որ նա գրեց հատուկ մաղթանք ռուսաց ցարերի և նրանց տան արևշատության համար, և այդ մաղթանքը կատարվում էր ռուսաց պետության ենթարկված բոլոր հայ եկեղեցիներում՝ մինչև ցարական կարգերի խորտակումը Ռուսաստանում...»[3]:

Մեկնաբանել այս աննախընթաց հավատարմության ցուցա-դրումը միայն նրանով, որ Ռուսաստանի հայերի առաջնորդության հարցը նպաստավոր լուծում էր ստացել՝ պատմականությունից չէր բխի: Հարկավոր է առաջին հերթին ելնել ժամանակի քաղաքական կացությունից, իսկ կացությունը պարտադրում է հիշել, որ նույն այն պահին, երբ Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչը Պետերբուրգում էր, Ռուսաստանը պատերազմի էր պատրաստվում Թուրքիայի դեմ: Ռուսական գործակալները Բալկանյան քրիստոնյա երկրներում և Վրաստանում ցրում էին Եկատերինա II-ի կոչը, որով քրիստոնյա ժողովուրդները հրավիրվում էին ազատագրական պայքարի, և որի մեջ կայսրուհին խոստանում էր նրանց ազատությունն անհավատներից: Հերակլ II-ը իրատեսորեն ընկալեց ռուսական այդ «քրիստոնեասիրական» հրավերը և գնաց ընդառաջ: Վրաստան մտած ռուսական զորաբաժնին միացած վրացական մի զորախումբ 1770 թ. պատերազմական գործողությունների մեջ մտավ Թուրքիայի դեմ: Ժամանակը համապատասխան ակնկալություններ էր ծնում նաև հայերի մեջ, որոնք չէին կարող անտարբեր մնալ տեղի ունեցող գործընթացներից: Ահա այս շատ կարևոր ժամանակներում զգույշ և հեռատես Սիմեոն Երևանցին Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդությունը հանձնեց իր երբեմնի աշակերտ տակավին երիտասարդ եպիսկոպոս Հովսեփ Արղությանին (սովորել է Էջմիածնի հոգևոր ճեմարանում՝ աշակերտելով Սիմեոնին): Վերջինս 1773 թ. մեկնեց իր նոր պաշտոնատեղին՝ Աստրախան: Սա Սիմեոն Երևանցու կողմից շատ խոշոր քայլ էր: Որպես կաթողիկոսին շատ մտերիմ մարդ՝ Արղությանը լավ գիտեր նրա ազգային-քաղաքական հայացքները: Հ. Արղությանը Ռուսաստանում հայոց թեմի սոսկ առաջնորդ չէր, այլ քաղաքական մի նշանավոր գործիչ էր, որը հսկայական դեր պիտի կատարեր XVIII դարի վերջին քառորդի հայ ազատագրական շարժման մեջ՝ շարունակելով և զարգացնելով դեպի Ռուսաստան կողմնորոշված հայ ազատագրական մտքի ու գործի ավանդույթները:

Արդ՝ տեսնենք, թե կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցին ինչպես էր գնահատում իրօրյա հայ ազատագրական շարժումը և նրա գործիչներին: Հարց, որին անշեղ պատասխանելու համար դյուրին չէ շրջանցել առանձնահատուկ մի իրողություն՝ հայ եկեղեցու և հայ առևտրական բուրժուազիայի փոխհարաբերությունների խնդիրը: Հատկապես XVIII դարում այդ խնդիրն այսպիսին էր. զարգացման հնարավորություններ ունենալով միայն

---

[3] *Լեո, նշվ. աշխ., էջ 281–282:*

գաղթավայրերում՝ հայ առևտրական բուրժուազիան, հանգամանքների բերումով ազգային ինքնագիտակցության գալով, ջանում է համախմբվել ազատագրական շարժման դրոշի ներքո: Նա իր ազդեցությունն այս կամ այն կերպ պիտի փորձեր տարածել մի ուժի միջոցով, որը տվյալ ժամանակաշրջանում շարունակում էր իշխող լինել իր բնօրրանում ապրող հայ ժողովրդի կյանքում: Հարկավ, դա հայ եկեղեցին էր, իսկ վերջինը իր գոյատևման համար կարիք ուներ նյութական օժանդակության. այդ օժանդակությունը նա ստանում էր հիմնականում հայկական գաղթօջախներից, որտեղ ղեկավար դեր ուներ առևտրական բուրժուազիան: Այս իրողությունը երկու այդ ուժերին դնում էր այնպիսի կացության մեջ, որ նրանք զգում էին միմյանց կարիքը:

Եթե երրորդ դասը Արևմտյան Եվրոպայում սկզբնական շրջանում դուրս եկավ եկեղեցու և եկեղեցականության դեմ, որպես ավատատիրության մնացուկների ջատագովի ու պաշտպանի, ապա հայ առևտրական բուրժուական դասը և հայ եկեղեցին ոչ միայն հանդես չեկան միմյանց դեմ, այլև համազգային գործերում ջանում էին համագործակցության: Սա զարգացման այն առանձնահատկություններից էր, որ բնորոշում էր հայ ժողովրդի պատմությունը տվյալ ժամանակաշրջանում: Թերևս պատահական չէր, որ ազատագրական շարժման դեմոկրատական ուղղության ներկայացուցիչ Շահամիր Շահամիրյանը ֆրանսիական մեծ հեղափոխության մասին խոսելիս քննադատում էր ֆրանսիացիներին, որոնք «լրբաբար յանդգնեալ են հրամանին հայրապետիկ իւրեանց, այսինքն Սրբազան փափին Հռոմու...»[4]:

Շարունակելով հարյուրամյակներից եկող ազգապահպանության գլխավոր ազդակներից մեկի իր դերը՝ հայ եկեղեցին հատկապես XVII–XVIII դարերում գործուն մասնակցություն է ունենում նաև հայ ազատագրական պայքարին, հայ ժողովրդի ռուսական կողմնո-րոշման սկզբնավորմանը, զարգացմանն ու ամրապնդմանը:

Հավատարիմ մնալով այդ ավանդույթներին՝ Սիմեոն Երևանցին չէր մերժում ժամանակի գործիչների ազգային-ազատագրական պայ-քարի ծրագրերում Ռուսաստանի դերի կարևորումը, նա բացասում էր այդ ծրագրերի իրացման ինչպես ռոմանտիկական, այնպես էլ արկածախնդրության հասնող ապստամբական մարտավարությունն ու ռազմավարությունը: Արդ՝ տեսնենք, թե Սիմեոն Երևանցին ինչպես էր գնահատում իրօրյա հայ ազատագրական շարժումը և նրա գործիչներին: Ստեղծված քաղաքական կացության հանգամանքներին լավատեղյակ կաթողիկոսը ամենից առաջ հստակ ու կտրուկ մերժեց հայ ազատագրական շարժման հնդկահայ գործիչ Հովսեփ Էմինի գործելակերպը: Կաթողիկոս Հակոբ Շամախեցուն 1763 թ. փոխարինած Սիմեոն Երևանցու առաջին գործերից մեկը լինում է այն, որ նամակով խնդրում

---

[4] **Տեր-Ավետիսյան Ս. Վ.,** *Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար (Գիտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի, հ. XIII, Ե., 1940, էջ 85):*

է Հերակլ II վրաց թագավորին, որ վերջինս Վրաստանից հեռացնի Էմինին: Ինչո՞ւ: Չէ՞ որ ազատագրական շարժման այդ գործիչը 1761 թ. Պետերբուրգում կանցլեր Ա. Գոլիցինին շարադրել էր իր քաղաքական ծրագիրը՝ ազատագրել Հայաստանը և Ռուսաստանի հովանավորությամբ ստեղծել դաշնային հայ-վրացական պետություն. չէ՞ որ դառնալով ռուսական կողմնորոշման համոզված կողմնակից՝ Էմինը Ռուսաստանի հետ էր կապում անդրկովկասյան քրիստոնյա ժողովուրդների ազատագրության գործը: Ավելին, Սիմեոն Երևանցուն հայտնի էր, որ 1763 թ. գարնանը իր ազգական Մովսես Բաղրամյանի և Աստրախանում նրանց միացած 30 հայ կամավորների հետ Էմինը մեկնել է Վրաստան և լավ ընդունելության արժանացել Հերակլ II թագավորից: Վրաց թագավորի համաձայնությամբ Էմինը սկսել էր եվրոպական մարտականոններով վարժեցնել վրացական զորքը: Նա սերտ կապեր էր հաստատել տեղի հայերի, Ղարաբաղի մելիքների և Մուշի Սրբ Կարապետ վանքի առաջնորդ Հովնանի հետ: Վերջինս Էմինի քաջալերանքով ապստամբություն է նախապատրաստում Արևմտյան Հայաստանում՝ խնդրելով Հերակլ II-ին վրաց զինջոկատով Էմինին ուղարկել իրեն օգնության: Վախենալով Թուրքիայի հետ բախումից՝ Հերակլ II-ը հրաժարվում է օգնել: Հ. Էմինի այս ծրագիրը շուտով հայտնի է դառնում Երևանի խանին և Սիմեոն Երևանցի կաթողիկոսին: Վերջինս հիմնովին մերժում է Հայաստանի ազատագրման Էմինյան ապստամբական գործելակերպը՝ անվանելով արկածախնդրություն: «Սիմոն կաթողիկոսի քաղաքականությունը հայ ազգի վերաբերմամբ,- գրել է Լեոն,- ոչ մի կերպ չէր կարող հավանություն տալ Էմինի ծրագրած գործողության եղանակին: Սիմոնը դեմ էր ամեն մի ապստամբական շարժման, ինչպես նաև եվրոպական ազատական մտքերին, որոնք գալիս էին խախտելու հայ ժողովրդի դարավոր ավանդական հասկացողությունները և մանավանդ հայ հոգևորականության դիրքը... հայ հոգևորականներն Էմինի մեջ տեսնում էին անգլիական և գերմանական բողոքականության մի գործիք, որ եկել էր մարտնչելու հայ դավանության դեմ»[5]:

Հովսեփ Էմինի դեմ էին տրամադրված նաև վրաց թագավորն ու ազնվականության մեծ մասը, որոնց նույնպես շահեկան չէին նրա ապստամբական գործելակերպը և հակաավատատիրական գաղափարները: Հերակլ II-ը 1754 թ. Էմինին արտաքսում է Վրաստանից: Երկար դեգերումներից հետո՝ 1767 թ., նորից է վերադառնում Վրաստան և կրկին արտաքսվում: Ամենուրեք մատնվելով ձախողման՝ մեկնում է Հնդկաստան, ուր 1773 թ. ծանոթանում և սերտ հարաբերություններ է հաստատում Շահամիր Շահամիրյանի հետ ու մասնակցում Մադրասի խմբակի գործունեությանը:

Մադրասի խմբակի նշանաբանն է դառնում Հայաստանի ազատագրությունը: Այդ խմբակի գլուխ էր կանգնած մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը, նրա գործընկերն էր դարձյալ մեծահարուստ Գրիգոր Խոջաջանյանը, որը Սիմեոն կաթողիկոսի մտերիմն էր, և որի նվերով Էջմիածնում ստեղծվել էր հայերեն տպարան: Աչքի էին ընկնում Շ.

---

[5] **Լեո,** *նշվ. աշխ., էջ 294:*

Շահամիրյանի որդին՝ Հակոբ Շահամիրյանը, ինչպես նաև Մովսես Բաղրամյանը:

Հայրենիքի ազատագրման համար Հ. Էմինի նվիրվածությունը և վճռականությունը ոգևորում են Մադրասի խմբակի բոլոր անդամներին: Նրանք անգամ որոշում են նրա տրամադրության տակ դնել տարեկան 12.000 ռուփի՝ պայքարի զորախմբեր ստեղծելու համար[6]: Ուշագրավ է Գր. Խաչաչանյանի պատրաստակամությունը: Նա հայտնում է, որ ինքը պատրաստ է այդ ծրագրի իրականացման համար կտակել սեփական կարողության մի մասը՝ պայմանով, եթե ծրագրին իր հավանությունը տար Սիմեոն կաթողիկոսը: Ծրագիրը ձախողվում է: Այդ ժամանակ Մադրասում էր Էջմիածնի նվիրակ Հովհաննես եպիսկոպոսը, որը հնդկահայերի մոտ հանգանակություն էր կատարում Երուսաղեմի վանքի համար: Իմանալով մադրասցիների մտադրության մասին՝ նա միջամտում է գործին և խափանում այն:

Հայաստանն ազատագրելու իր հույսերը Մադրասի խմբակը դրել էր հիմնականում հայ ժողովրդի վրա, որի ապստամբությունն օտար տիրապետողների դեմ պետք է գլխավորեին Ղարաբաղի մելիքներն ու Էջմիածնի կաթողիկոսությունը: Զինված օգնություն ստանալով Ռուսաստանից և Վրաստանից՝ հայ ապստամբներն ազատագրելու էին իրենց հայրենիքը պարսկաթուրքական բռնատիրությունից և այնտեղ ստեղծելու էին անկախ պետություն (հայ-վրացական): Այդ ծրագիրն իրագործելու համար Մադրասի գործիչները, որոնց վրա զգալի էր եվրոպական լուսավորիչների ազդեցությունը, անհրաժեշտ էին համարում առաջին հերթին լուսավորել ժողովրդին, երիտասարդությանը, քանզի լուսավորականությունն օգնելու էր խորապես գիտակցելու ազատագրության և անկախության նշանակությունը, օտարատիրության, ասիական միապետականության վնասակարությունը: Ըստ հնդկահայ գործիչների՝ միայն լուսավորականությունն արմատավորելուց հետո հնարավոր կլինի հայությանը պայքարի հանել հայրենիքի ազատագրության համար: Լուսավորության գործին նպաստելու համար Շ. Շահամիրյանը 1771 թ. Մադրասում հիմնադրում է տպարան: Այդ տպարանում լույս են ընծայվում Հայաստանի ազատագրման և այնտեղ ստեղծվելիք վարչակարգի վերաբերյալ ծրագրային գրականություն: Այդ խնդիրների առնչությամբ Մադրասի խմբակը նամակագրություն է սկսում Ղարաբաղի մելիքների, Էջմիածնի կաթողիկոսի, Հերակլ II-ի և այլ անձանց հետ:

Շահամիր Շահամիրյանի տպարանում Մովսես Բաղրամյանի աշխատասիրությամբ 1772 թ. լույս է տեսնում «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատությունը, որում արծարծված ազատության և լուսավորական գաղափարները, ինչպես նաև Հայաստանի ազատագրման քաղաքական ծրագիրը կրում էին Հովսեփ Էմինի հասարակական-քաղաքական հայացքների և գաղափարների ազդեցությունը[7]: Մադրասցիները «Նոր տետրակի»

---

[6] Հովսեփ Էմինի կեանքն ու արկածները: Հովսեփ Էմինի անգլերեն բնագրից թարգմանեց **Հ. Խաչմանյանը**, Բեյրութ, 1958, էջ 455:

[7] **А. Р. Иоаннисян.** *Иосиф Эмин, Е., 1946, с. 298–299.*

օրինակներից ուղարկեցին նաև հայ մելիքներին, իսկ մեկ օրինակ էլ ընդարձակ նամակի հետ առաքում են Սիմեոն կաթողիկոսին (ցավոք, այդ նամակը չի պահպանվել, նրա մասին հնարավոր գաղափար կարելի է կազմել միայն կաթողիկոսի պատասխանից): Խմբակի գործիչները անհրաժեշտ առաջնահերթություն էին համարում Ղարաբաղի մելիքների և Հերակլ II-ի միաբանությունը՝ դիտարկելով այն հետագա գործողությունների հաջողության նախապայման: Կարևորում էին օգնություն խնդրել Ռուսաստանից և այդ առնչությամբ հատուկ դիմում ուղղել Եկատերինա II կայսրուհուն: Գործողության ծրագրում նրանք կաթողիկոսին խորհուրդ էին տալիս պարզել հայերի քանակը, հատուկ նվիրակների միջոցով ռազմական գործ սովորեցնել բնակչությանը, նախապատրաստել նրան զինված ապստամբության: Ստանալով «Նոր տետրակը» և ծրագրային նամակը՝ Սիմեոն Երևանցին առաջարկությունների նկատմամբ հանդես է բերում բացահայտ բացասական վերաբերմունք: Կաթողիկոսը, որ խիստ դեմ էր ազատագրական ձգտումների ապստամբական դրսևորմանը, նամակ է հղում Շ. Շահամիրյանին և առաջարկում վերջ տալ արկածախնդրություններին: Մեկ այլ նամակով նա կարգադրում է հավաքել և այրել «Նոր տետրակի» օրինակները, փակել տպարանը, դադարեցնել Ղարաբաղի մելիքներին «վնասավոր» բաներ գրելը, հրաժարվել անխոհեմ մարտավարություններից և այդ գրքի հեղինակ Մովսես Բաղրամյանին հեռացնել խմբակից: Վերջինիս կաթողիկոսը բանադրում է և սպառնում նույնպես վարվել մյուսների նկատմամբ, եթե չկատարեն իր խորհրդատվական պայմանները[8]: «Նախ՝ զի զգիրքն զայն այրեսցէ իսպառ և զորս ցրուեալ է աստ և անդ՝ ջանասցէ և հնարեսցէ զայնս ևս այրել: Երկրորդ՝ զի տպագրատունն զայն խափանեսցէ իսպառ: Զի ի Պոլիս՝ և երբեմն յԱմստրդամ, երբեմն ևս ի Զմիւռին մինչ զգրեանս տպեցին և տպեն, թարց հրամանի ո՛չ տպեն, իսկ դու զայդ նոր հաստատեցեր, ասէ, և առանց զմեզ հարցանելոյ՝ զայդ կորստաբեր գիրքդ տպեցեր: Իցէ թէ կամ դու, և կամ յետագայք քո այլ ևս այդպիսի բանս տպիցէք՝ զհարցանելով մեզ վասն սաստիկ հեռաւորութեան տեղւոյդ: Ուրեմն, այն է լաւ՝ զի խափանիցէք, զի արհեստագէտ ևս չունիք, որ զմիտս բանին խոկացեալ՝ զօգտաւէտն և զանօգուտն ընտրիցէ: Իսկ այդ իմաստակդ որ իբր արհեստագէտ ձևացուցանէ զինքն, ո՛չ գիտե զինչ առնելն: Ուստի՝ թարց արհեստի և խոկացման տպեցեալն ձեր, բաց ի յամօթոյ և ի վնասուց զոչինչ օգուտ բերէ ազգիս: Եւ առ այս ևս յոյժ հարկ: Երրորդ՝ այդպիսի վնասաւոր բանիւք այլ մի՛ գրէք, ասէ, զթուղթս առ մէլիքս Խամսայու: Զի յերթևեկութենէ թղթոցն ձերոց ձայն ինչ ի վե՛ր ելանէ, ասէ, թերևս, և կամ թուղթն ձեր ի ձեռս տաճկաց անկանի, որ լինի վնաս ազգիս: Չորրորդ՝ պատուէր՝ զի անօգուտ մտածմունսն այլ մի՛ ևս արասցեն, և մի՛ հետևեսցին զկնի նորին, որ անօգուտ է և ի նանիր: Հինգերորդ՝ զի խաբեբայ Մովսէսն այն կամ վարեսցեն ի միջոյ իւրենց, և կամ ի տեղի ոչընչի համարելով՝ մի մերձեցուսցեն առ ինքեանս, զի ամօթ մեծ է ձեզ, ասէ, այդպիսւոյ մտաթափի մոլեկան խելացն հետևիլ և անկանիլ ի բերան ազգի: Վերջապէս բանադրանք այն չիք Մովսիսին և պատուէրէ զի մի ոք

[8] *Դիւան Հայոց պատմութեան, գ. Ը, մասն II, Թիֆլիս, 1908, էջ 576:*

հացողորդեսցի նմա բանիւ կամ գործով, և կցորդեսցի անիծից և դատապարտութեանց նորին: Եւ ապա այս թէ՝ զայս հնգեսին պատուէրս մեր որք յամենայնի օգտաւէտք են, եթէ առնիցէք, օրհնեալ եք, և և՛ս լիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ: Ապա թէ զանց արարեալ ո՛չ կատարիցէք, հարկ է ինձ այնուհետև հասարակածանոյց կոնդակաւ գրել յամենայն երկիր զանօրինակ արարմունդ ձեր, և զիս անպարտ և անմեղադրելի առնիւ»[9]: Մեկ այլ նամակում՝ հասցեագրված Գրիգոր Խոջաջանյանին, կաթողիկոսը գրում է. «Դուք ի հանգստեան և յապահովութեան գալով, ո՛չ գիտէք և ո՛չ տեսանէք զիտՀութիւնս այս կողմնականացս, որք երանեն զմեռեալս: Զի թէ գիտէիք, ասէ, ապա՝ ո՛չ կամէիք և ոչ տայիք թոյլ այդ դիւաշունչ պղծոյդ (խոսքը Մովսես Բաղրամյանի մասին է - Ն. Ս.) զայդ կորստաբեր գիրքդ շարադրել և տպել՝ և ի մէջ ազգիս տարածեալ»[10]:

Ընդարձակ այս մեջբերումներն ակնբախ են դարձնում, որ Սիմեոն Երևանցու զայրագին որակումները, գրելառճի խիստ արտահայտություններով կարգադրությունները, սպառնալիքներն ու անեծքները ազգի հոգևոր առաջնորդի եսասիրական ցանկությունների կամայական դրսևորումներ չէին: Պարզապես նրա գրչեմտրակը ցասկոտ ու անխնա էր իրականությունն իրատեսորեն չընկալողներին գնահատելիս: Գնահատականները, իրոք, խիստ էին, բայց բխում էին երկրատարածքի և միջազգային դրությունը շրջահայացորեն ընկալելու նրա ազնիվ կամեցողությունից և ազգին անշեղ ուղղորդելու նվիրական պատասխանատվությունից:

Ոչ մի կերպ չի կարելի համաձայնել Լեոյի այն տեսակետի հետ, թե հայ «ժողովրդի համար կեցության միակ հնարավոր եղանակը Սիմեոնը համարում էր անշարժությունը, լուռ ու մունջ հպատակությունը ճակատագրին»[11]: Չի կարելի, որովհետև նշանավոր պատմաբանի այս որակումը հակասում է Սիմեոն Երևանցու գործունեու-թյան ամբողջ ընթացքին: Ռուսական արքունիքի և հայ կյանքի առաջընթացին նախանձախնդիր Լազարյանների հետ հարաբերություններն ինքնին ի ցույց են հանում միանգամայն հակառակը՝ Սիմեոն Երևանցու գործունեությունը հայ ժողովրդի կեցությունը «անշարժությունից» հանելուն էր լոկ հետամուտ: Կաթողիկոսը հստակ ընդգծում էր, որ հայրենիքում ազգի վրա բռնացած անհամեմատ հզոր մահմեդական տիրապետողների լուծը ջարդելու համար բավարար չեն հնդկահայ գործիչների կողմից նախատեսվելիք ուժերը: Ի դեպ, Սիմեոն Երևանցին շատ իրավացիորեն Հերակլ II-ի թագավորության օրոք Վրաստանի «հզորությունը» համարում էր երերուն ու ժամանակավոր, քանզի Վրաստանն ինքը որևէ մեծ տերության հովանավորության կարիքն էր զգում (1783 թ. հուլիսի 24-ին իրողություն դարձավ հայ կաթողիկոսի կանխատեսումը, երբ Գեորգևսկի պայմանագրով Վրաստանը վասալական կախվածության մեջ ընկավ Ռուսաստանից): Իսկ ի՞նչ էր նրա ակնկալիքը վերջինից:

---

[9] *Նույն տեղում, էջ 577–580:*

[10] *Նույն տեղում, էջ 580:*

[11] **Լեո**, *Երկերի ժողովածու, հ. II, գ. II, Ե., 1973, էջ 324:*

Թեև 1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը նկատելի հիասթափություն էր առաջ բերել Անդրկովկասում, այնուամենայնիվ, Սիմեոն Երևանցին շարունակում էր մնալ ռուսական կողմնորոշման աներեր կողմնակից և Հայաստանի ազատագրության հույսը կապում էր Ռուսաստանի գալիք առաջխաղացման հետ:

Ստեղծված խորապատկերում դիտարկելով կացությունը՝ նա միաժամանակ հանգում է այն եզրակացության, որ մերձավոր ապա-գայում Ռուսաստանը դեպի Անդրկովկաս առաջանալու նպատակով գործուն քայլափոխեր չի ձեռնարկելու, ուստի ստեղծված վիճակի թելադրանքով հայ ժողովուրդը պետք է ձգտի հանդարտության՝ չկշռադատված տարերային արարքներով չբարենպաստի իշխող բռնապետությունների կողմից պատժիչ գործողությունների ավելի սաստկացմանը[12]:

Լինելով խորապես իրատես գործիչ, նա խոսքն ազատել էր դիվանագիտական մանիպուլյացիաներից և հեռանկարային խաբկանքներից: Անկախ ու սուր նրա միտքը հատկապես խառնակ վիճակներում որոնում և գտնում է ճիշտ ելքը: Իր գաղափարա-բարոյական նկարագրով, կազմակերպչի բացառիկ եռանդով ու տաղանդով, անզիջում սկզբունքայնությամբ և ժողովրդին անվերապահ նվիրվածությամբ, անդրդվելի, անվեհեր ու խոհեմ գործելակերպով Սիմեոն Երևանցին մեծ ազդեցություն էր թողել հայ եկեղեցու ամրակայման և ազգային գոյապայքարի երևելի ներկայացուցիչներ Հովսեփ Արղությանի, Ներսես Աշտարակեցու, Մաղաքիա Օրմանյանի վրա, որոնք տեսնում էին համազգային շահը բարդ իրադրության և հիմնական անելիքների մեջ:

---

[12] **Չորանյան Պ.**, *Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006: Տե՛ս նաև նույնի՝* **Սիմեոն Ա Երևանցի**, *Հայ եկեղեցու հանրագիտարան, պ. Ա, Ս. Էջմիածին, 2008, էջ 225:*

АРМЯНСКОЕ ОСВОБОДИТЕЛЬНОЕ ДВИЖЕНИЕ В 60-70-Х ГГ. XVIII В. И КАТОЛИКОС СИМЕОН ЕРЕВАНЦИ

САРУХАНЯН Н. Б.

Резюме

Изучая армянское освободительное движение XVIII в., нельзя забывать о роли армянских колоний. Во второй половине XVIII в. особо важную роль играли армянские колонии в Индии и России. Еще в начале 70-х годов XVIII в. в Мадрасе группой патриотически настроенных армянских деятелей во главе с богатым негоциантом Шаамиром Шаамиряном был создан кружок, пропагандировавший идею освобождения Армении и воссоздания независимого армянского государства. В основанной Ш. Шаамиряном армянской типографии печатались произведения, имевшие целью пробудить в армянской молодежи любовь к родине и свободолюбие, в частности, в 1773 г. была издана "Новая книга, называемая увещеванием", написанная соратником Иосифа Эмина Мовсесом Баграмяном.

В Мадрасе был разработан проект конституции и законодательства будущего независимого армянского государства, изложенный в произведении Ш. Шаамиряна “Западня честолюбия”. Идея этого проекта возникла в период новой волны осободительного движения в Армении, когда Армянский вопрос стал актуальной политической проблемой.

Уже в 70-х годах XVIII в. Шаамирян поддерживал связь с католикосом Симеоном Ереванци и карабахскими меликами, выступая с призывом возглавить освободительное движение в Армении.

Однако католикос Симеон Ереванци не разделял политических взглядов Иосифа Эмина, Мовсеса Баграмяна и Шаамира Шаамиряна, полагая, что это чревато тяжкими последствиями для армянского народа.

ARMENIAN LIBERATION MOVEMENT IN 60-70-IES OF THE XVIII CENTUTY AND CATHOLICOS SIMEON YEREVANTSI

N. SARUKHANYAN

Abstract

Armenian communities are of particular importance in the study of the Armenian Liberation movement in the 18th century. During the second half of the 18th century, Armenian communities of India and Russia played a key role. In the seventies of the 18th century, a group of patriots founded a society in Madras, propounding the independent statehood of Armenia. The society was headed by a rich Armenian trader Shahamir Shahamiryan, who also ran a printing house publishing works that would nurse patriotism among the Armenian youth.

Shahamiryan was also in constant contact with Simeon Yerevantsi, the Catholicos of the Armenians and the meliks of Artsakh (Karabakh) encouraging them to turn against the Persian and Ottoman rule and lead the liberation movement. The Catholicos, nevertheless, did not share his political views, and believed that turning against the powerful Empires could have dire consequences for the Armenian nation..